

Վիկտորիա Օհանյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի
ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

Quo Vadis?

Գ. Սենկևիչ

Հայաստանի Հանրապետության ներկայիս իրավական համակարգը դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Այդ մասին են վկայում մինչ օրս օրենսդրական մակարդակով կատարվող բարեփոխումները¹, որոնք հայեցակարգային փոփոխությունների են բերում. Հայաստանում ձևավորվել է վարչական արդարադատության համակարգ, ինչը ավանդաբար հատուկ է ռոմանագերմանական իրավունքի երկրներին, միևնույն ժամանակ, որպես սկզբունք ամրագրվել է Վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի պարտադիրությունը ստորադաս դատարանների համար՝ որպես օրենքի առաջ հավասարության սկզբունքի երաշխիք, ինչը Հայաստանում առաջ է բերում «նախադեպ» կոչված իրավական երևույթի քննարկման անհրաժեշտություն: Կոնվերգենցիոն և դիվերգենցիոն գործընթացները, տարբեր իրավական համակարգերի փոխներթափանցումը և մերձեցումը ողջ աշխարհում ընթացող գլոբալիզացիոն գործընթացների հետևանքով առաջացած միտում են. լայն առումով, աշխարհի իրավական քարտեզը մշտապես դինամիկայի մեջ է գտնվում: Հայաստանի Հանրապետության պարագայում խնդիրը առանձնահատուկ է, քանի որ, ըստ էության, անկախացմամբ և Երրորդ հանրապետության գոյությամբ սկսեց ձևավորվել որակապես նոր իրավական համակարգ, և դրա բոլոր տարրերի, այդ թվում՝ իրավունքի աղբյուրների հետագա զարգացման համար կարևոր է որոշելը, թե ինչ հիմքեր կան ձևավորվող ՀՀ իրավական համակարգը դասակարգելու և աշխարհի իրավական քարտեզի վրա դրա տեղը հստակեցնելու համար և ինչպիսի գործոններ են ազդում այդ դասակարգման վրա:

¹ Ներկայումս ՀՀ-ում ընթանում է դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը, որի հայեցակարգային հիմքը դրվեց 2005թ. սահմանադրական փոփոխություններով և 2007թ. Դատական օրենսգրքի ընդունմամբ:

Համեմատական իրավագիտության մեջ իրավական համակարգերի դասակարգման և դրա հիմքում ընկած գործոնների վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Այդուհանդերձ, մեր օրերում գնալով առավել կարևորվում են իրավական համակարգերի դասակարգման ժամանակ օգտագործվող երկու հասկացությունները՝ «իրավական ընտանիք» և «իրավական ավանդույթ»: «Իրավական ընտանիք» եզրույթը արդի համեմատական իրավագիտության շրջանակներում կիրառվող առավել տարածված եզրույթներից է, որն օգտագործվում է մատնանշելու համար դասակարգման արդյունքում ձևավորվող իրավական համակարգերի որոշակի հանրույթ կամ խումբ¹: Նույն նպատակին են ծառայում նաև «իրավական ավանդույթ», «արևմտյան» և «ոչ արևմտյան իրավական ավանդույթ» հասկացությունները, որոնք իրավական համակարգերի դասակարգման համատեքստում կիրառվում են համեմատական իրավագիտության ամերիկյան դպրոցի ներկայացուցիչների կողմից: Իրավական ընտանիքում իրավական համակարգերը միավորվում են համանման իրավաբանական հատկանիշներ ունենալու ուժով: Իրավական ընտանիք կատեգորիան արտացոլում է ազգային իրավական համակարգերի այն առանձնահատուկ գծերը, որոնք հանդիսանում են դրանց *կոնկրետ պատմական զարգացման նմանության արդյունք*՝ կառուցվածքը, իրավունքի աղբյուրները, իրավական մշակույթի առաջատար ինստիտուտներն ու ճյուղերը, ավանդույթները և այլն²: Իրավական ավանդույթ կատեգորիան այլ իմաստ ունի. այն բնորոշվում է որպես հասարակությունում իրավունքի դերի, իրավունքի և քաղաքական գաղափարախոսության բնույթի, ինչպես նաև իրավական համակարգի կազմակերպման և գործունեության վերաբերյալ մարդկանց գիտակցության մեջ խորապես արմատավորված, պատմական զարգացմամբ պայմանավորված վերաբերմունքների ու մոտեցումների համակցություն³: Բերված բնորոշումներից ակնհայտ է դառնում, որ թերևս առաջնային գործոնը, որը պետք է քննության

¹ Տե՛ս, օրինակ, Саидов А.Х., Сравнительное правоведение. М.: 2000, Давид Р., Жоффре-Спинози К., Основные правовые системы современности. М.:1999, Тихомиров Ю.А., Курс сравнительного правоведения. М.: 1996:

² Տե՛ս Саидов А.Х., նշված աշխ., էջ 118:

³ Տե՛ս Осаке Кр., Типология современного российского права на фоне правовой карты мира. Государство и право, М., No. 4, 2001, էջ 14:

առնվի Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի դասակարգման խնդրին անդրադառնալիս, հայկական հասարակության պատմական զարգացման ընթացքն է ու դրա արդյունքում ձևավորված որոշակի մշակութաբանական առանձնահատկությունները:

Անիրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ պոզիտիվ իրավունքի՝ որպես պետության կողմից սահմանվող կամ սանկցավորվող և պետական հարկադրանքի ուժով պահպանվող նորմերի համակցության մասին Հայաստանում կարելի է խոսել սկսած այն պահից, երբ Արևելյան Հայաստանը հայտնվեց ռուսական կայսրության տիրապետության ներքո: Այլ կերպ ասած՝ իրավունքի համակարգի ձևավորումը Հայաստանում նախ ընթանում է ռուսական կայսրության իրավունքի համակարգի զարգացման տրամաբանությամբ¹:

Մինչև խորհրդայնացումը Ռուսաստանի իրավական համակարգը ձևական ատրիբուտների տեսանկյունից կարելի էր դասել ռոմանագերմական իրավական ընտանիքին: Թեև Ռուսական կայսրությունում ևս առկա էին յուրատիպ ազգային սովորույթներ, սակայն իրավագիտությունը հիմնականում հենվում էր հռոմեական իրավունքի այն փորձի վրա, որը փոխառել էին մայրցամաքային Եվրոպայի պետությունները: Ռուսական իրավագիտության կատեգորիաները ռոմանական համակարգի կատեգորիաներ էին: Հետևաբար, իրավունքի աղբյուրների տեսակների հիերարխիայում առաջնային տեղը պատկանում էր «գրված իրավունքին» և դրա աղբյուրներին: Այնուամենայնիվ, պետք է հատկապես ընդգծել այն հանգամանքը, որ ռուսական իրականության մեջ շատ թույլ էին արտահայտված իրավուն-

¹ Հայաստանի Հանրապետությունում իրավունքի աղբյուրների պատմությունն, բնականաբար, անհամեմատ ավելի վաղ պատմություն ունի: Պետք է նշել, որ դրա ընթացքում կարելի է առանձնացնել հայկական իրավական մշակույթին բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են կրոնական իրավական համակարգերից ռեցեպցիայի բացակայությունը և ընդհանրապես խորթ նորմեր և իրավական ձևեր ընկալելու դժկամությունը (տե՛ս, օրինակ, Սուքիասյան Ա.Գ., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978թ., էջ 201): Այդուհանդերձ, սույն հոդվածի նպատակներից ելնելով՝ առավել կարևոր ենք համարում Հայաստանի իրավական համակարգի զարգացման ուսումնասիրությունը այն ժամանակահատվածից սկսած, երբ կարող ենք խոսել իրավական պետության զարգացման առաջ-քաշման և արդի իմաստով իրավունքի աղբյուրների՝ որպես այդ պետության կողմից սահմանված կամ սանկցավորված նորմերի արտաքին արտահայտման պաշտոնական ձևերի մասին:

քի զգացումն ընդհանրապես և իրավաբանական ավանդույթները մասնավորապես: Գրված իրավունքը, լինելով ռուսական մինչհեղափոխական իրավագիտության անկյունաքարը, խորթ էր ռուսական ազգային գիտակցությանը: Ժողովրդի միասնությունը հիմնված չէր իրավունքի վրա. *ubi societas ibi jus* (չկա հասարակություն առանց իրավունքի) արտահայտությունը երբեք անվերապահ ճշմարտություն չի հանդիսացել ռուս ժողովրդի համար¹: Գրված, սակայն հեղինակություն չվայելող իրավունքի ֆենոմենը իր հետքը թողեց նաև հայկական հասարակության ու դրա հոգեբանության ձևավորման վրա՝ առավել ևս հաշվի առնելով գրված իրավունքի վերաբերյալ այն բացասական վերաբերմունքը, որը ձևավորվել էր հայկական հասարակության շրջանակներում պատմական զարգացման տևական ժամանակահատվածի ընթացքում, երբ «գրված իրավունք» հասկացությունը համարժեք էր «օտար գերիշխող պետության գրված իրավունք» հասկացությանը: Հոգեմտակերպի և մշակույթի այս առանձնահատկությունը հանգեցրեց նրան, որ իրավական համակարգի փոփոխությունը մայրցամաքայինից դեպի սոցիալիստական Ռուսաստանում տեղի ունեցավ հարաբերականորեն փոքր ժամանակահատվածում, ինչը հնարավոր չէր լինի, եթե մայրցամաքային իրավական համակարգը Ռուսաստանում ունենար իրավական մշակութաբանական խորը հիմքեր: Հայաստանում անկախ պետականության հաստատումով այս գործընթացը կանգնեցվեց: Առաջին հանրապետության շրջանում ստեղծվեցին բոլոր նախադրյալները, որպեսզի Հայաստանի իրավական համակարգը շարունակի ձևավորվել ռոմանագերմանական ուղղությամբ՝ դարձյալ պահպանելով որակապես այլ մշակութաբանական հիմք²: Սակայն 1918-1920թթ. ընթացքում իրավաստեղծ գործառույթներ իրականացնող պետական իշխանության մարմինները պարզապես ի վիճակի չէին հասցնելու ձևավորել այնպիսի նոր մատեցումներ իրավունքի համակարգի և իրավունքի նորմերի արտահայտման արտաքին ձևերի հարցում, որը կտարբերվեր ռուսական իրավական ավանդույթից: Դեռ ավելին, եթե դիտարկենք

¹ Ст'ю Давид П., Основные правовые системы современности, М.: 1988, էջ 158:

² Լատինական Ամերիկայի պետությունները, որտեղ ռոմանագերմանական իրավական համակարգի արժեքների ընկալումը տեղի է ունեցել և մինչ այսօր զուգորդվում է տեղական մշակութաբանական առանձնահատկությունների ազդեցությամբ, այնուամենայնիվ դասվում են ռոմանագերմանական իրավական ընտանիքին (տե՛ս, օրինակ, Давид П., Жоффре-Спинози К., նշված աշխ.):

Առաջին հանրապետության ժամանակաշրջանը որպես իրավունքի արտահայտման արտաքին ձևերի (իրավունքի աղբյուրների) զարգացման տեսանկյունից, ակնհայտ է դառնում, որ այդպիսի զարգացում տեղի չի ունեցել, քանի որ.

1) Թեև էական աշխատանք կատարվեց Սահմանադրության նախագիծ մշակելու ուղղությամբ, Սահմանադրություն, որը կոչված էր միասնական իրավական սկզբունքների հիման վրա կանխորոշելու Հայաստանի առաջին հանրապետության իրավական համակարգի հիմնական բնորոշ գծերը, մասնավորապես՝ իրավունքի համակարգի առանձնահատկությունները, իրավունքի աղբյուրների տեսակները և դրանց աստիճանակարգությունը, առաջին հանրապետությունում այդպես էլ չընդունվեց:

2) Հայաստանի առաջին Հանրապետության իրավական համակարգի վրա շարունակում էր էական ազդեցություն թողնել Ռուսական կայսրության իրավունքը. 1918թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհուրդը ընդունեց «Նախկին ռուսական կայսրության օրենքները ՀՀ տարածքի վրա գործադրման մասին» օրենքը, որով նախատեսվեց ռուսական օրենքների գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ անհրաժեշտ փոփոխություններով:

3) Առաջին հանրապետության իրավական համակարգում տեղի ունեցող զարգացումները շատ դեպքերում իրավիճակային բնույթ ունեին և չեն կարող վկայել իրավունքի արտահայտման արտաքին ձևերի հարցում նոր մոտեցումների ձևավորման մասին¹: Իսկ 1920թ.

¹ Այսպես, Հայաստանի առաջին Հանրապետությունում գործում էր պատվիրակված օրենսդրական լիազորությունների ինստիտուտը. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1919թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 1-ը, իսկ այնուհետև 1920թ. մայիսի 5-ից մինչև հանրապետության անկումը՝ դեկտեմբերի 2-ը, օժտված է եղել նաև օրենսդրական լիազորություններով (այդ մասին ավելի մանրամասն տես Վաղարշյան, Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երևան, 2003թ., էջ 28, ինչպես նաև Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգը (1918-1920թթ.), Երևան, 2006թ., էջ 21): Սակայն, հիմնավոր չէր լինի փաստել Հայաստանի առաջին Հանրապետությունում կառավարության օրենքի ուժ ունեցող որոշումների՝ որպես իրավունքի ինքնուրույն աղբյուրի ավանդույթի ձևավորումը, որովհետև կառավարությունը այդպիսի լիազորություն ստանձնում էր հիմնականում նշված ժամանակահատվածներում խորհրդարանի անկենսունակության հետևանքով, և հետևաբար, օրենսդրական լիազորությունների պատվիրակումը իրավական համակարգի առանձնահատկությունների հետ չկապված քաղաքական որոշման արդյունք էր:

Հայաստանի խորհրդայնացման արդյունքում իրավական համակարգում սկզբնավորվող մոտեցումները հիմնովին փոխվեցին՝ բացառելով որևէ կայուն իրավական ավանդույթի ձևավորումը: Հայաստանում ձևավորվեց սոցիալիստական իրավական համակարգ:

Այսպիսով, Հայաստանի առաջին Հանրապետության իրավական համակարգը ձևավորվելուն պես սկսեց զարգանալ ռոմանագերմանական իրավական համակարգի ուղղությամբ՝ ունենալով դրա համար օբյեկտիվ նախադրյալներ: Այնուամենայնիվ, պատմաքաղաքական իրողությունները և զարգացման ժամանակահատվածի չափազանց կարճ լինելը կասեցրին այդ զարգացումը և խոչընդոտեցին ռոմանագերմանական իրավական համակարգին հետագա ինտեգրման գործընթացը Հայաստանում: Կտրուկ անցումը սոցիալիստական իրավական համակարգին զուգորդվեց նախորդող ժամանակահատվածում ձևավորվող մոտեցումների և ավանդույթների վերացմամբ, քանի որ հեղափոխական զարգացումը, ի տարբերություն աստիճանական զարգացման, անխուսափելիորեն հանգեցնում է փոխվող հասարակարգի ոչ միայն բացասական գծերի, այլև որոշ դրական ավանդույթների վերացման:

Տերմինաբանության և կառուցվածքի առումով սոցիալիստական իրավական համակարգը էական նմանություններ ուներ ռոմանագերմանական իրավական համակարգի հետ: Դա հիմք է տվել արևմտյան, հատկապես՝ ամերիկյան և անգլիական իրավագետներին հայտնելու այն կարծիքը, որ կան բոլոր հիմքերը սոցիալիստական իրավական համակարգը և դրա առավել բնորոշ ներկայացուցիչ հանդիսացող խորհրդային իրավունքը ռոմանագերմանական իրավունքի համակարգին դասելու համար: Իհարկե, սոցիալիստական իրավունքն ունի իր ուրույն գծերը և պետք է մայրցամաքային իրավական համակարգի շրջանակներում առանձնացվի, ինչպես ռոմանական, գերմանական, լատինաամերիկյան իրավունքները, սակայն առանձին իրավական ընտանիք համարվելու համար բավարար յուրահատկությամբ օժտված չէ: Խորհրդային իրավագետները, ընդհակառակը, պաշտպանում էին այն դիրքորոշումը, որ խորհրդային իրավական համակարգը ուրույն համակարգ է, որը չի կարելի դասել ռոմանագերմանական իրավական ընտանիքին: Իրավունքը վերնաշենք է, և որպես այդպիսին՝ այն արտացոլում է բազիսային հարաբերությունների առանձնահատկությունները: Խորհրդային և կապիտա-

լիստական տնտեսական համակարգերի բեռնային տարբերությունները պայմանավորում են նաև իրավական համակարգերի տարբերությունը, և հետևաբար, դրանց ձևական արտաքին նմանության հիման վրա այդ տարբերությունների անտեսումը ոչ գիտական մոտեցման արդյունք է¹: Ավելին, սոցիալիստական իրավունքը մարքսիստական գաղափարախոսության տեսանկյունից դիտարկվում էր որպես որակապես նոր, անցյալ և պատմություն չունեցող իրավական համակարգ:

Այս երկու արմատական մոտեցումների հետ մեկտեղ համեմատական իրավագիտության ֆրանսիական և ամերիկյան դպրոցների կողմից առաջ է քաշվել նաև երրորդ մոտեցումը: Սոցիալիստական իրավունքը իրավունքի ուրույն համակարգ է, որը չի կարող դասվել ռոմանագերմանական իրավական ընտանիքին: Պատճառն այն է, որ անգամ համընկնող եզրույթների առկայության և համանման կառուցվածի պայմաններում իրավական ինստիտուտները սոցիալիստական իրավական համակարգի պայմաններում ստանում են միանգամայն այլ նշանակություն և կիրառություն, քան դրանց նախատիպերը ռոմանագերմանական իրավունքում: Դա վերաբերում է այնպիսի հիմնարար կատեգորիաներին և ինստիտուտներին, ինչպիսիք են սեփականությունը, պայմանագիրը և դրա ազատությունը, արդար դատաքննությունը²: Դրա հետ մեկտեղ, ռոմանագերմանական իրավական համակարգը ներկայացնող իրավագետին սոցիալիստական իրավունքը առաջին հայացքից ծանոթ կթվա, քանի որ իրավական մտածողության տիպի, արտաքին ձևերի իրավունքի աղբյուրների շարքում առաջնային աղբյուրների, իրավունքի համակարգի կառուցվածքի առումով սոցիալիստական իրավունքը և մայրցամաքային իրավունքը գրեթե համընկնում են³: Սակայն վերջին հաշվով սոցիալիստական իրավունքը նույնքան խորթ է մայրցամաքային իրավական համակարգը ներկայացնող իրավագետին, որքան և անգլոսաքսոնական իրավական համակարգի իրավագետին, քանի որ բովանդակության, սկզբունքների, իրավական գաղափարախոսության առումով կատարելապես տարբերվում է արևմտյան իրավական ա-

¹ Տե՛ս Давид П., նշված աշխ., էջ 151:

² Տե՛ս Давид П., նշված աշխ., էջ 152:

³ Տե՛ս Glendon, M.A., Gordon, M.W., Osakwe, Ch. Comparative Legal Traditions. St.Paul, West Group, 1994, էջեր 261, 268:

վանդույթի կրող իրավական համակարգերից: Միևնույն ժամանակ, սոցիալիստական իրավական համակարգը, ձևավորվելով, էականորեն շեղվեց մայրցամաքային իրավունքի հենքից՝ հռոմեական մասնավոր իրավունքի նկատմամբ վերաբերմունքից և դրա հիմնարար ազդեցությունից: Սոցիալիստական իրավունքում շեշտադրումը հանրային իրավունքի վրա էր՝ իհարկե միանգամայն այլ պատճառներով, քան անգլոսաքսոնական իրավունքում:

1990-ականներին, երբ սոցիալիստական իրավական համակարգն ըստ էության փլուզվեց, արևմտյան իրավական ավանդույթը սկսեց էական ազդեցություն ունենալ ՀՀ իրավական համակարգի ձևավորման վրա: Դա մեծապես պայմանավորված էր նաև եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման գործընթացով, որը առաջ բերեց եվրոպական համակարգային մի շարք մոտեցումների արմատավորում: Միևնույն ժամանակ, իրավական մշակույթի հարթությունում զորեղ են սոցիալիստական իրավական համակարգի մոտեցումները: Դա խոսում է այն մասին, որ ՀՀ իրավական համակարգը դեռևս ամորֆ վիճակում է գտնվում, ինչը խոչընդոտում է դրա՝ որոշակի հստակ ուղիով զարգանալու տենպերին: Սակայն, միևնույն ժամանակ իրավական ամորֆությունը Հայաստանի իրավական համակարգի զարգացման հնարավորությունները դարձնում է էականորեն ավելի ճկուն. Հայաստանի պարագայում հնարավոր չէ խոսել իրավական համակարգի զարգացման բացառձակ առումով մեկ հնարավոր ուղու մասին, ընտրության խնդիրը կանգնած է նաև մեր իրավական համակարգի առջև: Կարելի է ասել, որ ներկայումս հայկական իրավունքը գտնվում է իրավական համակարգերի խաչմերուկում և պետք է ընտրություն կատարի՝ կան միանալով գոյություն ունեցող որևէ արևմտյան իրավական ընտանիքի, կան հետխորհրդային որոշ այլ պետությունների հետ մեկտեղ ձևավորելով որակապես նոր, եվրոագիստական իրավական համակարգ¹: Ընտրության տարբերակները իրականում ավելի քիչ են, քանի որ, սոցիալիստական իրավական համակարգի վերականգնումը հասկանալի պատճառներով հնարավոր չէ Հայաստանում, միևնույն ժամանակ խորը մշակու-

¹ Նման մոտեցում Ռուսաստանի՝ որպես հետխորհրդային պետության համար առաջ է քաշվել ամերիկյան համեմատական իրավագիտության արդի դպրոցի ներկայացուցիչ Քրիստոֆեր Օսաքվեի կողմից (տես Օսաքե, Կր., մշված աշխ., էջ 12):

թաքանական անջրպետ կա ընդհանուր իրավունքի համակարգի և հայկական ավանդույթի միջև: Այսինքն՝ իրականում խոսք է գնում ռոմանագերմանական իրավական համակարգ և նոր, հետխորհրդային տիպի իրավական համակարգ ձևավորվելու մասին:

Սոցիալիստական իրավական համակարգը համեմատական իրավագիտության մեջ ուսումնասիրվում է երեք հիմնական հարթություններում՝ որպես հայեցակարգային-ձևական կատեգորիա, որպես պատմական, քաղաքական, տնտեսական և սոցիալական կատեգորիա և վերջապես՝ որպես կրոնակերպ կատեգորիա¹: Իրավունքի աղբյուրների համակարգը և դրանց հարաբերակցությունը քննարկվում է սոցիալիստական իրավունքը որպես հայեցակարգային-ձևական կատեգորիա ուսումնասիրելու դեպքում, իսկ վերը արդեն խոսվեց այն մասին, որ ձևական, կառուցվածքային ատրիբուտների տեսանկյունից սոցիալիստական իրավունքը ռոմանագերմանական իրավունքի «դուստր» է: Փաստորեն, իրավունքի աղբյուրները Հայաստանի Հանրապետությունում սոցիալիստական իրավունքի ժամանակաշրջանում չէին տարբերվում այն աղբյուրներից, որոնք հատուկ են մայրցամաքային իրավունքին: Դարձյալ հիմնավորվում էր օրինակարգման ավանդույթը, օրենսդրությունը համարվում էր իրավունքի գերակա, առաջնային աղբյուր: Այնուամենայնիվ, այստեղ ևս կային որոշակի շեղումներ մայրցամաքային իրավունքից. մասնավորապես, սոցիալիստական իրավունքը չէր ընդունում հայեցակարգը (դոկտրինան) որպես իրավունքի կամ իրավաստեղծագործության աղբյուր: Դոկտրինան սոցիալիստական իրավունքում կատարում էր արդեն իսկ ընդունված օրենսդրական դրույթները գիտականորեն հիմնավորելու գործառույթ, մինչդեռ մայրցամաքային իրավունքում հայեցակարգը օրենսդրական դրույթների դատական մեկնաբանության համար կարևոր աղբյուր էր ծառայում, իսկ շատ դեպքերում անգամ մշակում էր լուծումներ, որոնք հետագայում օրենսդրական նախարդակ էին բարձրացվում: Օրենսդրության «օրինականությունը»՝ համապատասխանությունը ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող օրենսդրական ակտերին, սոցիալիստական իրավական համակարգում երբևէ չի դիտարկվել որպես խնդիր, որը կարող է լուծվել

¹ Տե՛ս Glendon M.A., Gordon M.W., Osakwe Ch., նշված աշխատությունը, է-ջեր 270-276:

դատական կարգով¹. այստեղից էլ սոցիալիստական իրավունքում այնպիսի իրավունքի աղբյուրի բացակայությունը, ինչպիսին են սահմանադրական արդարադատության և նորմ-վերահսկողության վարույթի իրականացման արդյունքում կայացված դատական ակտերը:

Ալենհայտ է, որ չենք կարող խոսել սոցիալիստական իրավունքի աղբյուրների և մայրցամաքային իրավունքի աղբյուրների նույնականության մասին՝ ելնելով հենց այն կանխադրությից, որ սոցիալիստական իրավական համակարգում բացակայում էին ինքնիշխան կամքի համարժեք արտացոլման մեխանիզմները. ավանդույթ, որի հետքերը ժառանգել է ցանկացած հետխորհրդային պետություն:

Փաստորեն, եթե իրավունքի մեթոդաբանության որոշ տարրերի և ենթակառուցվածքի առումով արդի հայկական իրավունքը կարելի է դասել հենց ռոմանագերմանական իրավական ընտանիքին, ապա իրավական գաղափարախոսության, դատավարական իրավունքի կառուցվածքի, և մեթոդաբանության այլ տարրերի (իրավական ոճ, իրավունքի աղբյուրներ՝ որպես իրավական կարգավորման կառուցակարգի և իրավունքի իրականացման գործընթացների արդյունավետությունը պայմանավորող իրավունքի արտաքին արտահայտման պաշտոնական ձևեր) առումով այն ռոմանագերմանական իրավունքից տարբերվում է զգալիորեն: Մասնավորապես, օրինակ, թեև Հայաստանում, ինչպես հիմնավորվեց վերը, դատական նախադեպը իրավունքի աղբյուր չէ, դրա «պարտադիրությունը» ամրագրված է օրենքի մակարդակով (ինչը խորթ է ռոմանագերմանական ավանդույթին): Հայկական իրավական գաղափարախոսության մեջ շարունակում են առկայել սոցիալիստական իրավական գաղափարախոսության բազում տարրեր: Այս հանգամանքները, միախուսվելով հոգեմտակերպային գծերի հետ, բացառում են Հայաստանում իրավամշակութաբանական այն հիմքը, որն անհրաժեշտ հատկանիշ է ռոմանագերմանական իրավական ընտանիքին պատկանող իրավական համակարգերում:

Հետաքրքիր է, որ քննարկելով Ռուսաստանի Դաշնության՝ ռոմանագերմանական իրավական համակարգին «անդամակցության» հարցը, ամերիկյան համեմատական իրավագիտության դպրոցի ներկայացուցիչ Քր. Օսաքվեն առաջ է քաշում այն դրույթը, որ սոցիա-

¹ Բացառություն էր կազմում միայն Հարավսլավիայի իրավական համակարգը:

լիստական իրավական գաղափարախոսության հիմքերը շարունակում են ընկած լինել այդ պետության քաղաքականության հիմքում, ինչը դրսևորվում է, օրինակ, հողի և ընդերքի նկատմամբ պետական սեփականության խիստ ռեժիմում և այլ ոլորտներում: Այս առումով Ռուսաստանի Դաշնությունը հեռու է իրավական պետության մասին այն պատկերացումներից, որոնք գոյություն ունեն արևմտյան իրավական մշակույթում¹: Այնուամենայնիվ, հենց ՌԴ փորձը վկայում է այն մասին, որ արևմտյան դեմոկրատական պետությունների իրավական համակարգի ուղղությամբ «բումն ընթացքը», տնտեսական «բարեփոխումները» կարող են բերել ոչ թե ազատ շուկայական տնտեսության ձևավորմանը՝ հետինդուստրիալ կայուն զարգացման, այլ կիսաքրեականացված կապիտալիզմի ներուժով¹: Հետևաբար, արևմտյան քաղաքակրթության որևէ իրավական համակարգ անվերապահորեն փոխառելու ձգտումները հղի են որոշակի վտանգներով և արդարացված չեն հետխորհրդային պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար:

Իրականում վերը թվարկված գործոնների ազդեցությունը կրում է օբյեկտիվ բնույթ: Այնպիսի երևույթներ, ինչպիսիք են հասարակության և իրավակիրառողների վերաբերմունքի իրավունքի աղբյուրների նկատմամբ, իրավական մշակույթի առանձնահատկությունները, պայմանավորված են ոչ այնքան «անցումային փուլի» արգասիքներով, որքան պատմական և մշակութաբանական գործոններով: Հայաստանի Հանրապետությունը հարում է ռոմանագերմանական իրավական ընտանիքին, սակայն որակապես տարբերվում է դրանից. մեր պետությունում ձևավորվող իրավական համակարգը պարունակում է առաջացած խնդիրների լուծման ուրույն միտումներ: Դա հնարավորություն է տալիս դիտարկելու Հայաստանում հետխորհրդային եվրո-ասիական նոր տիպի իրավական համակարգի առաջացման նախադրյալները: Մյուս կողմից, ժողովրդավարության զարգացման գործընթացը Հայաստանում հզոր ներուժով է օժտված: Ժողովրդավարության գործընթացի գործիքների լիարժեք օգտագործումը դրանց բարձր մշակվածության պայմաններում կարող է էական ազդեցություն ունենալ իրավական համակարգի զարգացման ուղու վրա: «Ո՛ւր ենք գնում» հարցը Հայաստանի՝ որպես իրավական պետության և Հայաստանի իրավական համակարգի զարգացման ուղու

¹ Տե՛ս Осаке Кр., նշված աշխ., էջեր 21-22:

*առումով դեռ երկար է լինելու հայ իրավագետների ուշադրության
կենտրոնում:*

Victoria Ohanyan

*Candidate of Legal Sciences, Assistant Professor, YSU Chair of
Theory and History of State and Law,*

IMPACT OF LEGAL CULTURE AND TRADITIONS ON THE FORMATION OF THE SYSTEM OF SOURCES OF LAW

Recent developments in the comparative legal science have demonstrated a trend of giving more and more weight to the legal tradition as the cornerstone of classification of legal systems. Armenian legal system is still in the process of continuous transition: in the light of its sometimes chaotic movements the direction in which Armenian legal system is moving cannot be clearly seen. Important step in finding the answer to the question “Quo Vadis” is due consideration of Armenian legal tradition, identifying main features of legal culture through analysis of legal history. Since the era of Russian Empire dominance Armenia has attempted to become a part of Romano-Germanic culture by establishing a civil law system. The process continued during the years of First Armenian Republic, with no significant progress. Soviet legal system, being often considered to be quasi civil law system, significantly altered the main principles and concept of civil law system, seriously affecting the direction of development of Armenian legal system as well. Obviously, it would be unjustified to see the sources of civil law system and the sources of socialist law as similar, because the socialist law system, unlike civil law system, did not have any adequate mechanisms of expression of sovereign’s will. Armenia, like many other post-soviet countries, has inherited the traces of this tradition and approach. In terms of legal methodology and legal infrastructure Armenian legal system is very close to the Romano-Germanic type; however, the same cannot be stated regarding legal ideology, legal procedures, legal style and legal

¹ Алексеев С.С., Восхождение к праву. Поиски и решения. М.: 2001, էջեր 722-724:

culture.

On one hand, there is strong causality between the factors, described above, and Armenian legal tradition. Attitude of the society towards the law, presumption about the statutes and other sources of law, peculiarities of legal culture, are not so related to the “transition period”, but are rather caused by and linked with historical and cultural factors. This may lead to a conclusion, that Armenian legal system per se will never become a pure civil law system. Likewise, the future of the legal system in Armenia is to improve, remaining however in a “post soviet” status. On the other hand the process of development of democracy in Armenia is potentially very powerful. Proper utilization of the tools of the process of democratization can significantly impact the development path of Armenian legal system, meaning, that above made conclusion is very questionable. Undoubtedly, the question “Quo Vadis?” with respect to the development of Armenian legal system will remain a very challenging one for Armenian legal scholars for a long time.